



Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի (ԽԿՄԴ) հիմնադրման վերաբերյալ շրջանակային համաձայնագիր

Սույն համաձայնագրի Կողմերը,

վկայակոչելով 2023 թվականի ապրիլի 9-ին Հնդկաստանի վարչապետի մեկնարկած խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքը եւ ֆինանսավորման ու տեխնոլոգիաների հետ կապված ծախսերը նվազեցնելուն ուղղված համատեղ ջանքերի, աշխարհի՝ թվով յոթ հիմնական խոշոր կատվազգիների, այն է՝ վագրերի, առյուծների, հովազների, ձյունահովազների, պումաների, յագուարների եւ չիտաների պաշտպանության եւ պահպանության նպատակով համապատասխան միջոցներ մոբիլիզացնելու եւ նրանց կարիքներին հարմարեցված ապագայի տեխնոլոգիաների ուղին հարթելու միասնական ձգտումը,

ընդունելով, որ բնակավայրերի, որսի եւ խոշոր կատվազգիների վիճակի բարելավումը խոշոր կատվազգիների պահպանությամբ հետաքրքրված, այդ տիրույթում գտնվող երկրների եւ (կամ) տիրույթից դուրս գտնվող երկրների, պահպանության հարցերով զբաղվող գործընկերների, շահագրգիռ ձեռնարկատիրական եւ կորպորատիվ խմբերի եւ խոշոր կատվազգիների պահպանության ոլորտում աշխատող գիտական հաստատությունների համար ստեղծում է աննախադեպ հնարավորություններ՝ իրենց ապագան բնապահպանական տեսանկյունից անվտանգ դարձնելու եւ կլիմայական փոփոխությունների անբարենպաստ հետեւանքները մեղմելու համար,

հաստատելով այն կոնկրետ եւ ընդհանուր խոչընդոտները, որոնք դեռեւս ծառայած են այդ տիրույթում գտնվող երկրներում խոշոր կատվազգիներին ապաստարան տրամադրելու ճանապարհին,

հաստատելով, որ այդ խոչընդոտները կարող են կարգավորվել, եթե խոշոր կատվազգիների տիրույթում գտնվող երկրները, խոշոր կատվազգիների տիրույթից դուրս գտնվող, խոշոր կատվազգիների պահպանությամբ հետաքրքրված երկրները, ձեռնարկատիրական եւ կորպորատիվ խմբերով հետաքրքրված, պահպանության հարցերով զբաղվող գործընկերները եւ խոշոր կատվազգիների պահպանության ոլորտում աշխատող գիտական հաստատությունները գործեն համակարգված եղանակով՝ ունենալով ուժգին քաղաքական ներուժ եւ վճռականություն՝ խոշոր



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

կատվազգիների կենսունակ եւ ինքնուրույն գոյատեւող տեսակի առկայությունն ապահովելու համար,

հաշվի առնելով տվյալ տիրույթի երկրներում գտնվող Կողմերի միջեւ բնակավայրերի, որսի եւ խոշոր կատվազգիների վիճակի կապակցությամբ առավել սերտ համագործակցության հրատապ անհրաժեշտությունը՝ ուղղված ֆինանսավորման եւ տեխնոլոգիաների հետ կապված ծախսերը նվազեցնելու համար անհրաժեշտ միասնական ջանքերի ընդլայնման, պաշտպանության եւ պահպանության համար անհրաժեշտ ռեսուրսների մոբիլիզացման, պահպանության նպատակով իրականացվող առաջնային ուսումնասիրությունների աջակցությանը եւ Կողմերի՝ համաշխարհային կլիմայի փոփոխությունների հետ կապված խնդիրների դեմ պայքարելու հնարավորությունների ամրապնդմանը,

միավորված լինելով իրենց միջեւ համակարգման եւ որոշումների կայացման արդյունավետ մեխանիզմ ներդնելու ցանկությամբ,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված I

Եզրույթների սահմանումները

Սույն համաձայնագրի նպատակներով՝

ա) «համաձայնագիր» եզրույթը նշանակում է Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի (ԽԿՄԴ) հիմնադրման վերաբերյալ համաձայնագիր,

բ) «կազմակերպություն» եզրույթը նշանակում է սույն համաձայնագրին համապատասխան հիմնադրված՝ Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինք (այսուհետ՝ ԽԿՄԴ),

գ) «Վեհաժողով» եզրույթը նշանակում է կազմակերպության՝ որոշումներ կայացնելու համար իրավասու բարձրագույն մարմինը, որը նշանակվում է սույն համաձայնագրի Կողմերի կողմից,

դ) «գլխավոր տնօրեն» եզրույթը նշանակում է կազմակերպության գլխավոր գործադիր տնօրենը, որը նշանակվում է Վեհաժողովի կողմից,



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

ե) «Քարտուղարություն» եզրույթը նշանակում է այն մարմինը, որը կազմակերպությանը վարչատնտեսական աջակցություն է տրամադրում, ինչպես նաև իրականացնում է գործողություններ Վեհաժողովի ուղղորդմամբ,

զ) «ստորագրող երկիր» եզրույթը նշանակում է երկիր, որը ստորագրել է սույն համաձայնագիրը, սակայն դեռևս ի պահ չի հանձնել վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա փաստաթղթերը,

է) «Կողմ» եզրույթը նշանակում է ստորագրող երկիրը, որն ի պահ է հանձնել վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա փաստաթղթերը, եւ որի նպատակներով սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտել, կամ այն երկիրը, որը միացել է սույն համաձայնագրին,

ը) «դիտորդ» եզրույթը նշանակում է կազմակերպություն կամ հաստատություն, որը Վեհաժողովի կողմից ստացել է դիտորդի կարգավիճակ,

թ) «ներկայացուցիչ» եզրույթը նշանակում է տվյալ Կողմին Վեհաժողովում ներկայացնելու նպատակով համաձայնագրի Կողմի նշանակած պաշտոնատար անձ,

ժ) «ընդունող երկիր» նշանակում է այն երկիրը, որտեղ գտնվում են կազմակերպության գլխամասային գրասենյակները, եւ

ժա) «գործառական ծախսեր» եզրույթը նշանակում է կազմակերպության Վեհաժողովի, Քարտուղարության եւ օժանդակ մարմինների գործառական ծախսերը:

Հոդված II

Հիմնադրումը

1. Կազմակերպությունն այսուհետ սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան հիմնադրվում է որպես միջկառավարական կազմակերպություն:

2. Կազմակերպության գլխամասային գրասենյակները, այդ թվում՝ Քարտուղարությունը, գտնվում են Հնդկաստանի Հանրապետությունում: Հնդկաստանի Հանրապետության կառավարության եւ կազմակերպության միջեւ կնքվում է «Գլխամասային գրասենյակների վերաբերյալ առանձին համաձայնագիր»:



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

Հոդված III

Ընդհանուր նպատակը

Կողմերը սույնով հիմնում են Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքը (այսուհետ՝ ԽԿՄԴ), որի միջոցով նրանք համատեղ կարգավորում են աշխարհի՝ թվով յոթ (7) հիմնական խոշոր կատվազգիների՝ վագրերի, առյուծների, հովազների, ձյունահովազների, պումաների, յագուարների եւ չիտաների պաշտպանության եւ պահպանության, ինչպես նաեւ սոցիալ-բնապահպանական ապագայի ապահովման ընդհանուր մարտահրավերները եւ աջակցում են կլիմայական տարատեսակ փոփոխությունների անբարենպաստ ազդեցությունները մեղմելու գործընթացին:

Հոդված IV

Ուղղորդող սկզբունքները

Սույն համաձայնագրով սահմանված նպատակներն իրագործելու համար Կողմերն առաջնորդվում են հետեւյալ սկզբունքներով եւ մոտեցումներով.

1. Կողմերն իրենց գործողությունները համակարգում են այնպիսի ծրագրերի եւ գործողությունների միջոցով, որոնք ուղղված են բնակավայրերի, որսի եւ խոշոր կատվազգիների վիճակի բարելավմանը, այդ թվում՝ խոշոր կատվազգիների պաշտպանությանը եւ պահպանությանը, նորարարություններին, հետազոտություններին, զարգացմանը, ինչպես նաեւ կարողությունների զարգացմանը:

2. Նշված ջանքերը գործադրելով՝ Կողմերը սերտորեն համագործակցում եւ ձգտում են փոխշահավետ հարաբերություններ հաստատել համապատասխան հաստատությունների, կազմակերպությունների, պետական եւ մասնավոր շահագրգիռ Կողմերի եւ անդամ չհանդիսացող երկրների հետ:

3. Կողմերից յուրաքանչյուրը ներկայացնում եւ թարմացնում է խոշոր կատվազգիների պաշտպանության եւ պահպանության ծրագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, որի նպատակներով Կողմերը ձգտում են, որ ԽԿՄԴ համատեղ գործողությունները լինեն շահավետ, ինչպես նաեւ իրականացնում են ծրագրի՝ փոխադարձաբար համաձայնեցված վերլուծական, ներառյալ՝ դրա կարիքների եւ նպատակների, ներպետական միջոցների եւ ձեռնարկված կամ ձեռնարկվելիք գործողությունների քարտեզագրումը՝ արժեշղթայի եւ տարածման գործընթացում նշված նպատակներն իրագործելու համար: Քարտուղարությունը պահպանում է նշված



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

գնահատումների տվյալների շտեմարանը՝ համագործակցության հնարավորությունները վերլուծելու, ինչպես նաև համագործակցության նոր հնարավորություններ առաջարկելու համար:

4. Կողմերից յուրաքանչյուրն իր երկրում նշանակում է ԽԿՄԴ ազգային համակարգող մարմին, որը Կողմերի միջև հանդես է գալիս որպես ԽԿՄԴ թղթակիցների մշտական ցանց: Նրանք փոխգործակցում են միմյանց, ինչպես նաև հիմնական շահառուների հետ՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտները բացահայտելու, ծրագրային առաջարկները կազմելու եւ Քարտուղարությանը ԽԿՄԴ նպատակների իրագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

Հոդված V

Ծրագրերը եւ այլ գործունեություն

1. ԽԿՄԴ ծրագիրն այնպիսի գործողությունների, նախագծերի եւ գործունեության ամբողջություն է, որոնք Կողմերը համակարգված եղանակով իրականացնում են Քարտուղարության աջակցությամբ՝ III եւ IV հոդվածներում սահմանված նպատակներին հասնելու եւ ուղղորդող սկզբունքները պահպանելու նպատակով: Ծրագրերը կազմված են այնպես, որ ապահովեն առավելագույն մասշտաբի ազդեցություն եւ հնարավորինս մեծ թվով Կողմերի մասնակցություն: Դրանք ներառում են պարզ, չափելի, իրագործելի, համապատասխան եւ ժամկետներով պայմանավորված նպատակներ:

2. Ծրագրի հետ կապված առաջարկները մշակվում են Կողմերի ազգային համակարգող բոլոր մարմինների միջև բաց խորհրդակցությունների միջոցով՝ Քարտուղարության աջակցությամբ, եւ հիմնված են Կողմերի կողմից տրամադրվող տեղեկությունների վրա: Ծրագրի առաջարկը կարող է ներկայացվել առնվազն երկու Կողմերի կամ Կողմերի խմբերի միջև, կամ Քարտուղարությունը կարող է համալիր գործողությունների ծրագիր (ԳԾ) ներկայացնել, որը ներառում է այն նպատակները, որոնց վերջինս ակնկալում է հասնել՝ ԽԿՄԴ նպատակներին համապատասխան: Քարտուղարությունն ապահովում է, որ ԽԿՄԴ բոլոր ծրագրերը համաձայնեցված լինեն:

3. Քարտուղարությունն ազգային համակարգող մարմինների ցանցի միջոցով ծրագրային առաջարկները թվային եղանակով ներկայացնում է Վեհաժողովին: Ծրագրային առաջարկը բաց է համարվում բոլոր այն Կողմերի համար, որոնք



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

ցանկանում են միանալ դրան, եթե առնվազն երկու Կողմ աջակցում են դրան, եւ եթե առարկություններ չեն ներկայացվում ավելի քան երկու Կողմերի կողմից:

4. Ծրագրային առաջարկը պաշտոնապես հաստատվում է դրան միանալու ցանկություն ունեցող պետության Կողմերի կողմից՝ համատեղ հայտարարության միջոցով: Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր որոշումներն ընդունվում են ծրագրին մասնակցող Կողմերի կողմից: Դրանք իրականացնում են յուրաքանչյուր Կողմի նշանակած ներկայացուցիչները՝ Քարտուղարության ղեկավարությամբ եւ աջակցությամբ:

5. Տարեկան աշխատանքային ծրագիրը ներկայացնում է ԽԿՄԴ ծրագրերի եւ գործունեության այլ տեսակների ամփոփ նկարագիրը: Քարտուղարությունն այն ներկայացնում է Վեհաժողովին՝ ապահովելու նպատակով, որ տարեկան աշխատանքային ծրագրում ներկայացված բոլոր ծրագրերը եւ գործունեության բոլոր տեսակները համապատասխանեն ԽԿՄԴ-ի գերակա նպատակին:

Հոդված VI

Իրավունակությունը

Կազմակերպությունը պետք է օժտված լինի իրավասություններով, ինչպես նաեւ պետք է ունենա այնպիսի իրավունակություն, որը կարող է անհրաժեշտ լինել իր գործառույթների եւ նպատակների իրագործման համար, մասնավորապես՝

- ա) համաձայնագրեր եւ պայմանագրեր կնքելու,
- բ) շարժական եւ անշարժ գույք ձեռք բերելու եւ օտարելու, ինչպես նաեւ
- գ) դատական վարույթ հարուցելու եւ այդ վարույթի ընթացքում պաշտպանության համար:

Հոդված VII

Վեհաժողովը

1. Վեհաժողովը բաղկացած է բոլոր Կողմերի ներկայացուցիչներից:
2. Կողմերից յուրաքանչյուրը Վեհաժողովում նշանակում է մեկ (1) ներկայացուցիչ: Սույն համաձայնագրի իրականացման եւ դրա նպատակին հասնելու



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

համար ձեռնարկվելիք համակարգված գործողությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով Վեհաժողովն իր նախագահին ընտրում է երեք տարի ժամկետով:

3. ԽԿՄԴ-ի նիստին Վեհաժողովն անցկացնում է տարեկան (տարին երկու անգամ անցկացվող) հանդիպում: Վեհաժողովը կարող է հանդիպել նաեւ հատուկ հանգամանքներում՝ ներկա գտնվելով թե՛ հեռավար, թե՛ ֆիզիկապես՝ Կողմերի պարզ մեծամասնության պահանջով՝ ելնելով անհրաժեշտությունից եւ հանգամանքների բնույթից:

4. Առաջին հանդիպմանը Վեհաժողովը սահմանում է կազմակերպության ներքին կանոնակարգերը:

5. Առաջին հանդիպմանը Վեհաժողովն ընտրում եւ նշանակում է Քարտուղարության գլխավոր տնօրենին:

6. Վեհաժողովը՝

ա) ընդունում է կազմակերպության ներքին կանոնակարգերը եւ անհրաժեշտության դեպքում դրանցում կատարում է համապատասխան փոփոխություններ,

բ) նշանակում է Քարտուղարության գլխավոր տնօրենին,

գ) հավանություն է տալիս այնպիսի օժանդակ մարմինների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են կազմակերպության նպատակներն իրագործելու համար,

դ) հաստատում է կազմակերպության գործողությունների ծրագիրը եւ բյուջեն,

ե) վերանայում է կազմակերպության գլխավոր տնօրենի եւ օժանդակ մարմինների կողմից ներկայացված հաշվետվությունները՝ դրանց առկայության դեպքում, եւ նրանց ներկայացնում է առաջարկություններ,

զ) խրախուսում եւ ամրապնդում է հարաբերությունները համապատասխան այլ կազմակերպությունների հետ,

է) քննարկում եւ ընդունում է որեւէ Կողմի (Կողմերի) առաջարկած փոփոխությունները՝ սույն համաձայնագրի XIX հոդվածին համապատասխան,

ը) հաստատում է դիտորդի կարգավիճակ ստանալու նպատակով ներկայացված դիմումները, եւ

թ) իրականացնում է այլ գործառույթներ, որոնք անհրաժեշտ են



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

կազմակերպության նպատակներին հասնելու համար:

7. Համաձայնագրի փոփոխություններն ընդունվում են Վեհաժողովի կողմից՝ ներկա եւ քվեարկող Կողմերի երկու երրորդի մեծամասնությամբ:

8. Վեհաժողովը գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը՝ որոշումներն ընդհանուր համաձայնության հիման վրա կայացնելու համար: Եթե որեւէ համաձայնության չեն գալիս, ապա ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշումները կայացվում են ներկա եւ քվեարկող Կողմերի պարզ մեծամասնությամբ, մինչդեռ նյութաիրավական հարցերով որոշումները կայացվում են ներկա եւ քվեարկող Կողմերի երկու երրորդի մեծամասնության կողմից:

9. Յուրաքանչյուր Կողմ Վեհաժողովում ունի մեկ ձայնի իրավունք: Դիտորդները կարող են մասնակցել՝ առանց քվեարկության իրավունք ունենալու:

10. Վեհաժողովի միջանկյալ նիստերն անցկացվում են նախարարների մակարդակով ծրագրերը քննարկելու եւ սույն համաձայնագրի V հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ դրանց հետագա իրականացման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով:

11. Ժողովը գնահատում է ԽԿՄԴ-ի շրջանակներում իրականացվող ծրագրերի եւ այլ գործունեության ընդհանուր ազդեցությունը, մասնավորապես՝ խոշոր կատվազգիների պաշտպանության եւ պահպանության ծրագրի իրականացման, կատարողականի, հուսալիության, ինչպես նաեւ ֆինանսավորման հետ կապված ծախսերի եւ մասշտաբների շրջանակներում: Սույն գնահատման հիման վրա Կողմերը կայացնում են ԽԿՄԴ-ի նպատակների հետագա իրականացման կապակցությամբ անհրաժեշտ բոլոր որոշումները:

12. Հնդկաստանի Հանրապետության՝ ԽԿՄԴ-ի վերաբերյալ 2024 թվականի մարտի 12-ի հռչակագրի հիման վրա ստեղծված ԽԿՄԴ-ի միջազգային ղեկավար կոմիտեի կողմից ընդունված բոլոր որոշումները ներկայացվում են Վեհաժողովին՝ վերջինիս կողմից նրա առաջին հանդիպման ժամանակ ընդունման նպատակով:

Հոդված VIII

Քարտուղարությունը

1. Քարտուղարությունը ձեւավորվում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

պահից: Քարտուղարությունը ղեկավարում է գլխավոր տնօրենը, որը ԽԿՄԴ-ի գլխավոր գործադիր տնօրենն է: Գլխավոր տնօրենը պաշտոնավարում է հինգ (5) տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել մեկ (1) անգամից ոչ ավելի:

2. Կազմակերպության ներքին կանոնակարգերի համաձայն՝ գլխավոր տնօրենը նշանակում է Քարտուղարության անձնակազմի անդամներին: Անձնակազմի անդամ չհանդիսացող աշխատակիցներին նշանակում է գլխավոր տնօրենը՝ հատուկ պայմաններով եւ հանձնարարված պարտականություններով, որոնց կատարումն անհրաժեշտ է կազմակերպության նպատակներն իրագործելու համար:

3. Վեհաժողովի ուղղորդմամբ գլխավոր տնօրենը կազմակերպության անունից սահմանում է վարչական եւ պայմանագրային կարգավորումներ՝ ուղղված կազմակերպության գործունեության իրականացմանը:

4. Քարտուղարությունը՝

ա) կազմում եւ ներկայացնում է Քարտուղարության ներքին կանոնակարգերը՝ Վեհաժողովի կողմից քննարկման նպատակով,

բ) կազմակերպում է Վեհաժողովի եւ կազմակերպության օժանդակ այլ մարմինների նիստերը եւ մատուցում է անհրաժեշտ ծառայությունները,

գ) կառավարում է բյուջեն եւ իրականացնում է Վեհաժողովի հավանությանն արժանացած ծրագրեր,

դ) Վեհաժողովին պարբերաբար ծանուցում է բյուջեի եւ ծրագրերի իրականացման առաջընթացի մասին,

ե) համակարգում է իր գործունեությունը համապատասխան այլ մարմինների եւ կառույցների հետ,

զ) ազգային համակարգող մարմիններին օգնում է կազմել ծրագրային առաջարկները եւ Վեհաժողովին ներկայացվող առաջարկությունները,

է) կազմակերպում է պահպանության հետ կապված համագործակցությունը եւ Վեհաժողովի կողմից հաստատված ծրագրերի, նախագծերի եւ աշխատանքային պլանների համաձայն գործող համապատասխան ներպետական, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, պետական եւ մասնավոր հիմնադրամների եւ միավորումների հետ կնքում է համաձայնագրեր կամ պայմանագրեր,

ը) դյուրացնում է Վեհաժողովի կողմից դիտարկման ենթակա



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

առաջարկությունների կազմման, գնահատման եւ ներկայացման գործընթացը,

թ) յուրաքանչյուր ծրագիր իրականացնելիս, այդ թվում՝ միջոցներ ներգրավելիս, Կողմերին ուղղորդում եւ աջակցություն է տրամադրում,

ժ) Վեհաժողովի կողմից հաստատված կարգով սահմանում եւ իրականացնում է ԽԿՄԴ-ի եւ դրա ծրագրերի գործողության համար անհրաժեշտ հաղորդակցության բոլոր միջոցները, գործիքակազմը եւ միջլորտային գործունեությունը, եւ

ժա) կատարում է Քարտուղարությանը վերապահված այլ գործառույթներ, որոնք կարող են սահմանվել Վեհաժողովի կողմից:

Հոդված IX

Բյուջեն եւ ֆինանսական միջոցները

1. Քարտուղարության եւ Վեհաժողովի գործառական ծախսերը, ինչպես նաեւ օժանդակ գործառույթների եւ միջլորտային գործունեության հետ կապված մյուս բոլոր ծախսերը կազմում են ԽԿՄԴ-ի բյուջեն: Ծախսերը ծածկվում են՝

ա) Կողմերից, ՄԱԿ-ից եւ դրա ներկայացուցիչներից, ինչպես նաեւ շահագրգիռ այլ երկրներից եւ կազմակերպություններից ստացված կամավոր ներդրումների հաշվին,

բ) պետական (մասնավոր) ոլորտների նախաձեռնություններից ստացվող կամավոր ներդրումների հաշվին: Շահերի հնարավոր բախման դեպքում Քարտուղարությունը քննարկման առարկա հանդիսացող հարցերն ուղարկում է Վեհաժողովին՝ ներդրումների ընդունման հարցը հաստատելու նպատակով,

գ) կորպորատիվ սոցիալական պատասխանատվության եւ հնարավոր այլ աղբյուրների հաշվին,

դ) Վեհաժողովի կողմից հաստատված կոնկրետ գործունեությունից գոյացող եկամուտների հաշվին:

2. Քարտուղարությունը Վեհաժողովին առաջարկներ է ներկայացնում՝ հիմնական ֆոնդ ստեղծելու եւ այն զարգացնելու նպատակով:

3. Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը 5 տարվա ընթացքում՝ 2023-24-ից մինչեւ 2027-28 թվականներն ընկած ժամանակահատվածում, 18 միլիոն ԱՄՆ դոլարի (մոտավոր) չափով ներդրում է հատկացնելու ԽԿՄԴ-ին՝ հիմնական ֆոնդի ստեղծման, ենթակառուցվածքների կառուցման եւ շարունակական ծախսերի համար:



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

4. Հատուկ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, բացառությամբ ընդհանուր բյուջեի շրջանակներում նախատեսված վարչական ծախսերի, գնահատվում եւ մոբիլիզացվում են սույն ծրագրին մասնակցող երկրների կողմից՝ Քարտուղարության օժանդակությամբ եւ աջակցությամբ:

5. Կողմերը ջանքեր են գործադրում ԽԿՄԴ-ի կողմից տրամադրվող ֆինանսական կամ օժանդակության այլ տեսակների առավել արդյունավետ օգտագործման համար եւ օգտագործում են այդ օժանդակությունը միայն նախատեսված նպատակներն իրագործելու համար:

6. Ֆոնդերի նկատմամբ տարեկան կտրվածքով արտաքին անկախ աուդիտ է իրականացվում: Վեհաժողովի կողմից հավանություն ստանալու դեպքում Քարտուղարությունը կարող է նշանակել արտաքին աուդիտոր՝ ԽԿՄԴ-ի հաշիվներն ուսումնասիրելու համար:

Հոդված X

Պաշտոնական լեզուն եւ կազմակերպության խորհրդանշանը

Կազմակերպության պաշտոնական լեզուն անգլերենն է: Կազմակերպությունն ունի դրոշ եւ խորհրդանշան:

Հոդված XI

Կառույցները եւ օժանդակ մարմինները

1. Կազմակերպության հիմնական կառույցներն են Վեհաժողովը եւ Քարտուղարությունը:

2. Օժանդակ մարմինները կարող են ստեղծվել Վեհաժողովի կողմից հավանության արժանանալու դեպքում՝ սույն համաձայնագրի VII հոդվածին համապատասխան:



Հոդված XII

Անդամակցությունը

Անդամակցությունը բաց է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների համար: Ստորագրող երկրները սույն համաձայնագրի Կողմեր են դառնում այն բանից հետո, երբ նրանք ի պահ են հանձնել վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա փաստաթղթերը, եւ այն դեպքում, եթե երկրները միացել են սույն համաձայնագրին: Սույն համաձայնագրի Կողմերը կազմակերպության անդամներ են:

Հոդված XIII

Գործընկեր կազմակերպությունները

1. Վեհաժողովը կարող է գործընկեր կազմակերպության կարգավիճակ շնորհել այն կազմակերպություններին, որոնք ունեն ներուժ՝ օգնելու ԽԿՄԴ-ին հասնելու իր նպատակներին, այդ թվում՝ տարածաշրջանային միջկառավարական տնտեսական ինտեգրման կազմակերպություններին, որոնք կազմված են ինքնիշխան պետություններից, եւ որոնցից առնվազն մեկը ԽԿՄԴ-ի անդամ է:

2. Գործընկերությունների վերաբերյալ որոշումները, որոնք պետք է կնքվեն կոնկրետ ծրագրի համատեքստում, ընդունվում են սույն ծրագրին մասնակցող երկրների կողմից՝ Քարտուղարության հաստատմամբ:

3. Միավորված ազգերի կազմակերպությունը, այդ թվում՝ նրա մարմինները (ներկայացուցիչները) կարող են լինել ԽԿՄԴ-ի ռազմավարական գործընկեր:

Հոդված XIV

Դիտորդները

1. Վեհաժողովի կողմից դիտորդի կարգավիճակ կարող է տրվել՝

ա) ստորագրող երկրներին, որոնք ի պահ չեն հանձնել վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա փաստաթղթերը,

բ) այլ երկրների, որոնք դիտորդի կարգավիճակ ստանալու համար համապատասխան դիմում են ներկայացրել, եւ

գ) պահպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպություններին,



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

ինչպես նաև հասարակական կազմակերպություններին:

2. Կազմակերպության գործունեությանը դիտորդների մասնակցության հետ կապված հարցերը Վեհաժողովը կարգավորում է կազմակերպության ներքին կանոնակարգերին համապատասխան:

Հոդված XV

ԽԿՄԴ-ի արտոնությունները եւ անձեռնմխելիությունը

1. Կազմակերպության ակտիվ գործունեության նպատակներով այն պետք է օգտվի այնպիսի արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնք սահմանված են կազմակերպության եւ ընդունող երկրի միջեւ կնքված, գլխամասային գրասենյակի վերաբերյալ համաձայնագրով:

2. Կազմակերպությունը կարող է կնքել համաձայնագրեր շահագրգիռ Կողմերի հետ՝ բացառությամբ ընդունող երկրի՝ այդ Կողմերի տարածքներում համապատասխան արտոնություններ, ինչպես նաև անձեռնմխելիություն ապահովելու նպատակով:

Հոդված XVI

Մտավոր սեփականության իրավունքները

1. Մտավոր սեփականության իրավունքները՝ կապված հետազոտական եւ տեխնոլոգիական որեւէ զարգացման կամ ապրանքների մշակման կամ ծառայությունների մատուցման հետ՝

ա) որոնք Կողմերի կողմից իրականացվում են համատեղ, կամ հետազոտության արդյունքները, որոնք ստացվել են Կողմերի կողմից համատեղ գործունեություն իրականացնելու ընթացքում գործադրված ջանքերի արդյունքում, պետք է լինեն Կողմերի ընդհանուր սեփականությունը՝ յուրաքանչյուր դեպքում փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով,

բ) որոնք մեկ Կողմն իրականացնում է միայնակ եւ ինքնուրույն, կամ առանձին հանդես եկող Կողմի միայնակ եւ ինքնուրույն ջանքերի արդյունքում ստացված հետազոտության արդյունքները պետք է լինեն համապատասխան Կողմի սեփականությունը:



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

2. Սույն համաձայնագրին համապատասխան՝ ԽԿՄԴ-ի աջակցությամբ իրականացվող ցանկացած տեսակի հայտնագործությունների կամ աշխատանքի նկատմամբ արտոնագրային իրավունքները, հեղինակային իրավունքները կամ նմանատիպ այլ իրավունքներ պատկանում են ԽԿՄԴ-ին, եթե որեւէ կոնկրետ դեպքում այլ համաձայնություն առկա չէ: Կողմերը ԽԿՄԴ-ին տեղեկություն են տրամադրում նաեւ այն դեպքում, եթե Կողմն աշխատում է անդամ չհանդիսացող որեւէ այլ կազմակերպության/երկրի/անդամ չհանդիսացող պետության հետ, կամ եթե բացի ԽԿՄԴ-ի կողմից տրամադրվող աջակցությունից՝ խոշոր կատվազգիների պաշտպանության եւ պահպանության նպատակով որեւէ այլ աղբյուրից ստացվում է աջակցություն որեւէ այլ ձեռով:

3. Կազմակերպության անվան, պատկերանշանի եւ (կամ) պաշտոնական խորհրդանշանի կիրառումը կազմակերպությանը չառնչվող որեւէ հրատարակության, փաստաթղթի եւ (կամ) ամսագրի վրա՝ առանց Վեհաժողովի նախնական հաստատման, արգելվում է:

Հոդված XVII

Վեճերի կարգավորումը

Սույն համաձայնագրի դրույթների մեկնաբանությունից, իրականացումից եւ (կամ) կիրառումից ծագող ցանկացած հակասություն կամ վեճ կարգավորվում է բարեկամաբար՝ երկու Կողմերի միջեւ դիվանագիտական ուղիներով իրականացվող փոխադարձ խորհրդակցությունների եւ (կամ) բանակցությունների միջոցով:

Հոդված XVIII

Ուժի մեջ մտնելը

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա հինգերորդ (5-րդ) փաստաթուղթը, այդ թվում՝ Հնդկաստանի Հանրապետության փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո՝ տասնհինգերորդ (15-րդ) օրը:

2. Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն ստորագրող երկրների կողմից:

3. Ցանկացած երկրի համար, որը վավերացնում, ընդունում, հաստատում է



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

սույն համաձայնագիրը կամ միանում է սույն համաձայնագրին դրա ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համապատասխան փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ տասնհինգերորդ (15-րդ) օրը:

4. Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ԽԿՄԴ-ի միջազգային ղեկավար կոմիտեն դադարում է գոյություն ունենալ, եւ ստեղծվում է մշտական կոմիտե:

Հոդված XIX

Փոփոխությունները

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է սույն համաձայնագրում փոփոխություններ կատարելու առաջարկով հանդես գալ՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած մեկ տարին լրանալուց հետո Քարտուղարությանը գրավոր ծանուցելով այդ մասին: Առաջարկվող փոփոխությունների մասին Քարտուղարությունը տեղեկացնում է բոլոր Կողմերին Վեհաժողովի կողմից դրանց քննարկումից առնվազն վաթսուն (60) օր առաջ: Համաձայնագրի փոփոխություններն ընդունվում են սույն համաձայնագրի VII հոդվածի 7-րդ կետին համապատասխան:

2. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում փոփոխությունների վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա հինգերորդ (5-րդ) փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո՝ երեսուներորդ (30-րդ) օրը: Մյուս Կողմերի համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հաստատում են փոփոխությունները դրանց ուժի մեջ մտնելուց հետո, փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանց համապատասխան փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո՝ երեսուներորդ (30-րդ) օրը:

Հոդված XX

Դուրս գալը

Ավանդապահին հասցեագրված գրավոր ծանուցմամբ Կողմը կարող է դուրս գալ սույն համաձայնագրից, իսկ այդ ծանուցման մասին այն պետք է անմիջապես տեղեկացնի բոլոր Կողմերին: Դուրս գալն ուժի մեջ է մտնում ծանուցումն ստանալու ամսաթվից սկսած՝ վեց (6) ամիս հետո, եթե ծանուցման մեջ ավելի ուշ ժամկետ նշված չէ:



ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ

Հոդված XXI

Ավանդապահը

Սույն համաձայնագրի վավերացման, ընդունման կամ հաստատման կամ սույն համաձայնագրին միանալու վերաբերյալ փաստաթղթերն ի պահ են հանձնվում Հնդկաստանի Հանրապետության կառավարությանը, իսկ դրա ցանկացած փոփոխություն կամ վերանայում, որի հետ անհրաժեշտ է ներկայացնել դրա հավաստագրված պատճենը՝ սույն համաձայնագրի յուրաքանչյուր Կողմի:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն շրջանակային համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Երևանում 2025 թվականի հունիսի 30-ին՝ անգլերենով:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

Framework Agreement on the establishment of the *International Big Cat Alliance (IBCA)*

The Parties to this Agreement,

Recalling the International Big Cat Alliance launched by the Prime Minister of India on 9th April 2023 and the shared ambition to undertake joint efforts required to lower the cost of financing and technology, mobilize resources for protection and conservation of seven major Big Cats in the world viz. Tiger, Lion, Leopard, Snow Leopard, Puma, Jaguar and Cheetah, and pave the way for future technologies adapted to their needs,

Recognizing that improvement in the status of habitats, prey and Big Cats provides range-countries and/or non-range countries interested in big cat conservation, conservation partners, interested business and corporate groups, and scientific institutions working in the field of big cat conservation, with an unprecedented opportunity to secure their ecological future and mitigate adverse effects of climate change,

Acknowledging the specific and common obstacles that still stand in the way of harboring big cats in range countries.

Affirming that these obstacles can be addressed if big cat range-countries, nonrange countries interested in big cat conservation, and non-range countries interested in big cat conservation, conservation partners, interested business and corporate groups, and scientific institutions working in the field of big cat conservation, act in a coordinated manner, with strong political impulse and resolve, and that to ensure a viable and self-sustainable population of big cats.

Considering the urgent need for closer cooperation on the status of habitats, prey, and big cats among the Parties in range countries to contribute to the expansion of joint efforts required to lower the cost of financing and technology, mobilize resources for protection and conservation, conduct advanced conservation studies, and strengthen the Parties' capacities in coping with global climate change issues.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

United in their desire to establish an effective mechanism of coordination and decision-making amongst them,

Have agreed as follows:

Article I Definition of terms

For the purposes of this Agreement:

- a) "Agreement" means the Agreement on the Establishment of the International Big Cat Alliance (IBCA);
- b) "Organization" means the International Big Cat Alliance (hereinafter referred to as the "IBCA") established under this Agreement;
- c) "Assembly" means the highest decision-making organ of the Organization comprising representatives appointed by the Parties to this Agreement;
- d) "Director-General" means the Chief Executive Officer of the Organization who is appointed by the Assembly;
- e) "Secretariat" means the body which shall provide administrative support to the Organization as well as carry out the activities guided by the Assembly;
- f) "Signatory Country" means a country which has signed this Agreement, and yet to deposit the instrument of ratification, acceptance, or approval of it;
- g) "Party" means a Signatory Country, which has deposited an instrument of ratification, acceptance, or approval and for which this Agreement has entered into force, or a country acceded to this Agreement;



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

- h) "Observer" means an organization or institution which has been granted the Observer status by the Assembly;
- i) "Representative" means an official nominated by a Party to the Agreement to represent the Party in the Assembly;
- j) "Host Country" means the country where the headquarters of the Organization is located; and
- k) "Operational Expenditure" means the costs for the functioning of the Assembly, Secretariat and subsidiary bodies of the Organization.

Article II Establishment

1. The Organization is hereby established as an Inter-Governmental Organization in accordance with the provisions of this Agreement.
2. The Headquarters of the Organization, including the Secretariat, shall be located in the Republic of India. A separate "Headquarters Agreement" shall be concluded between the Government of the Republic of India and the Organization.

Article III General Objective

The Parties' hereby establish an International Big Cat Alliance (hereinafter referred to as the IBCA), through which they will collectively address common challenges to the protection and conservation of seven (7) major Big Cats in the world viz. Tiger, Lion, Leopard, Snow Leopard, Puma, Jaguar and Cheetah and to secure socio-ecological future, and support adaptation and mitigation of adverse effects of climate change.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

Article IV Guiding Principles

In order to achieve the objectives of this Agreement, Parties shall be guided by the following principles and approaches:

1. The Parties coordinated action through programmes and activities aimed at improving the state of habitats, prey, and big cats, including big cat protection and conservation, innovation, research, development and capacity building.
2. In this endeavor, Parties cooperate closely and strive for establishing mutually beneficial relationship with relevant institutions, organizations, public and private stakeholders and with non-member countries.
3. Each Party shares and updates relevant information about big cat protection and conservation programmes for which it seeks the benefits of collective action under the IBCA, as well as a common, mutually agreed upon analytical mapping of the programme, including its needs and objectives, domestic measures and initiatives taken or intended to be taken to achieve these objectives, along the value chain and dissemination process. The Secretariat maintains a database of these assessments in order to analyze and suggest opportunities for cooperation.
4. Each Party designates a National Focal Point for the IBCA in their country, which constitutes a permanent network of IBCA correspondents between the Parties. They interact with one another as well as key stakeholders to identify areas of mutual interest, design programme proposals, and make recommendations to the Secretariat regarding the implementation of the IBCA's objectives.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

Article V Programmes and other activities

1. IBCA programme is a collection of actions, projects, and activities that Parties will carry out in a coordinated manner, with the assistance of the Secretariat, in order to achieve the objectives and guiding principles specified in Articles III and IV. Programmes are developed to ensure maximum scale effect and participation of the greatest possible number of Parties. They include simple, measurable, achievable, relevant, and timebound objectives.
2. Programme proposals are designed through open consultation among all National Focal Points of the Parties, with the assistance of the Secretariat, and based on the information shared by Parties. A Programme can be proposed by at least two Parties or group of Parties, or the Secretariat may provide a comprehensive Plan of Action (POA) containing the goals it expects to achieve in accordance with the IBCA's objectives. The Secretariat shall ensure that all IBCA Programmes are coherent.
3. The Secretariat circulates programme proposals to the Assembly digitally via the National Focal Points network. A Programme proposal is deemed open to adhesion by Parties willing to join if it is supported by at least two Parties and if objections are not raised by more than two Parties.
4. A Programme proposal is formally endorsed by State Parties willing to join, through a joint declaration. All decisions regarding the implementation of the Programme are taken by Parties participating in the Programme. They are carried out, with the guidance and assistance of the Secretariat, by Representatives designated by each Party.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

5. The annual work plan provides an overview of the IBCA's programmes and other activities. The Secretariat presents it to the Assembly to ensure that all programmes and activities in the annual work plan are consistent with the IBCA's overarching goal.

Article VI Legal Capacity

The Organization shall have legal personality and shall have the capacity, as may be necessary for the exercise of its functions and the fulfillment of its purposes, in particular:

- a) to enter into agreements and contracts;
- b) to acquire and dispose of movable and immovable property; and
- c) to institute, and defend, in legal proceedings.

Article VII Assembly

1. The Assembly shall be comprised of the Representatives of all Parties.
2. Each Party shall appoint one (1) Representative to the Assembly. The Assembly shall elect its President for a term of three years, to make decisions concerning the implementation of this Agreement and coordinated actions to be taken to achieve its objective.
3. The Assembly shall have an annual/biannual meeting at the seat of the IBCA. The Assembly may also meet under special circumstances either virtually or physically at the request of a simple majority of the Parties, depending upon the need and nature of the circumstance(s).
4. The Assembly shall, at its first meeting, adopt the internal Regulations of the Organization.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

5. The Assembly shall, at its first meeting, elect and appoint the Director General of the Secretariat.
6. The Assembly shall:
 - a) adopt and, if necessary, amend the internal regulations of the Organization;
 - b) appoint the Director General of the Secretariat;
 - c) approve the establishment of subsidiary bodies that are necessary for the achievement of the objectives of the Organization;
 - d) approve the program and budget for the activities of the Organization;
 - e) review reports submitted by the Director General and the subsidiary bodies of the Organization, if any and provide guidance to them;
 - f) promote and strengthen relationships with other relevant organizations;
 - g) deliberate and adopt amendments to the Agreement proposed by any Party/Parties in accordance with Article XIX of this Agreement;
 - h) approve applications for Observer status; and
 - i) exercise such other functions as necessary for the achievement of the objectives of the Organization.
7. Amendments to the Agreement shall be adopted by the Assembly by two thirds majority of the Parties present and voting.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

8. The Assembly shall make every effort to reach decisions by consensus. If a consensus cannot be achieved, decisions on procedural issues are made by a simple majority of the Parties present and voting, while decisions on substantive issues are made by two-thirds majority of the Parties present and voting.
9. Each Party has one vote in the Assembly. Observers may participate without having right to vote.
10. Break-out sessions of the Assembly may be held in order to take stock of the Programmes at Ministerial level and make decisions regarding their further implementation, in furtherance of Article V(4) of this Agreement.
11. The Assembly assesses the aggregate effect of the Programmes and other activities under the IBCA, in particular in terms of implementing protection and conservation programme for big cats, performance, reliability, as well as cost and scale of finance. Based on this assessment, Parties take all necessary decisions regarding the further implementation of the objectives of the IBCA.
12. All decisions taken by the International Steering Committee of the IBCA, established by the Republic of India Declaration dated 12th March 2024 on the IBCA, are submitted to the Assembly for adoption at its first meeting.

Article VIII Secretariat

1. Upon entry into force of the Agreement, the Secretariat shall be formed. The Secretariat shall be headed by the Director General, who is the Chief Executive Officer of the IBCA. The Director General shall hold the office for a term of five (5) years, and extendable for not more than one (1) term.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

2. Subject to internal Regulations of the Organization, the Director General shall appoint the staff members of the Secretariat. Non-staff personnel shall also be appointed by the Director General, on specific terms and assigned duties that are necessary towards achieving the objectives of the Organization.
3. Subject to guidance by the Assembly, the Director General shall enter into administrative and contractual arrangements on behalf of the Organization for the implementation of the activities of the Organization.
4. The Secretariat shall:
 - a) prepare and propose, the internal Regulations of the Secretariat for consideration by the Assembly;
 - b) make arrangements for sessions of the Assembly and other subsidiary bodies of the Organization and provide the necessary services;
 - c) manage the budget and implement the programs approved by the Assembly;
 - d) report to the Assembly on the budget and progress of the implementation of the programs on a regular basis;
 - e) coordinate its activities with other relevant bodies and entities;
 - f) assist the National Focal Points in preparing the Programme proposals and recommendations submitted to the Assembly;
 - g) make appropriate arrangements for conservation-related cooperation and enter into agreements or contracts with relevant national, regional or international organizations, non-



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

- governmental organizations, foundations and associations, both public and private which are in line with the programmes, projects, and work plans approved by the Assembly;
- h) facilitate preparation, evaluation and recommendation of proposals which are to be considered by the Assembly;
 - i) provide guidance and support to Parties in the implementation of each Programme, including raising of funds;
 - j) set and operate all means of communication, instruments and crosscutting activities required for functioning of the IBCA and its Programmes, as approved by the Assembly; and
 - k) perform other secretariat functions as may be decided by the Assembly.

Article IX

Budget and Financial Resources

1. Operating expenditure of the Secretariat and Assembly, and all other expenditure related to support functions and cross-cutting activities, form the budget of the IBCA. They are covered by:
 - a) Voluntary contributions from its Parties, UN & its agencies, other interested Countries and interested organizations;
 - b) Voluntary contributions from public sector undertakings / private sector. In case of a possible conflict of interest, the Secretariat refers the matters to the Assembly for approval of the acceptance of the contributions;
 - c) Corporate Social Responsibilities and other possible sources;



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

- d) Revenue to be generated from specific activities approved by the Assembly.
2. The Secretariat will make proposals before the Assembly to establish and enhance a Corpus Fund.
3. Government of the Republic of India will contribute US\$ 18 Million (Approx) to the IBCA for creating corpus, infrastructure and recurring expenditure over 5 year duration from 2023-24 to 2027-28.
4. Financial resources required for the implementation of a specific Programme, other than administrative expenditure falling under the general budget, are assessed and mobilized by countries participating in this Programme, with the support and assistance of the Secretariat.
5. The Parties shall exert its best efforts to make the most effective use of the financial or other assistance provided by IBCA and shall use such assistance only for the purpose for which it is intended.
6. The funds shall be subject to an independent external audit on an annual basis. The Secretariat with the approval of the Assembly may appoint an external auditor to examine the accounts of the IBCA.

Article X

Official Language and Organization Symbol

The official language of the Organization shall be English. The Organization shall have a flag and an emblem.

Article XI

Organs and Subsidiary Bodies



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

1. The principal organs of the Organization shall be the Assembly and a Secretariat.
2. Subsidiary bodies may be established upon approval by the Assembly in accordance with Article VII of this Agreement.

Article XII Membership

Membership is open to all UN member States. The Signatory Countries shall become Parties to this Agreement after they have deposited an instrument of ratification, acceptance, or approval, and Countries acceded to this Agreement. The Parties to this Agreement shall be the members of the Organization.

Article XIII Partner Organizations

1. Partner Organization status may be granted by the Assembly to organizations that have potential to help the IBCA to achieve its objectives, including regional inter-governmental economic integration organizations constituted by sovereign States and at least one of which is a member of IBCA.
2. Decision regarding partnerships to be concluded in the context of a specific Programme is taken by countries participating in this Programme, with the approval of the Secretariat.
3. United Nations including its organs/agencies will be the Strategic Partner of the IBCA.

Article XIV Observers



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

1. Observer status may be granted by the Assembly to:
 - a) Signatory Countries which have not deposited instruments of ratification, acceptance or approval;
 - b) Other countries which have submitted an application to be an Observer;
and
 - c) International organizations and non-governmental organizations acting in the field of conservation.
2. Matters related to the participation of Observers in the activities of the Organization may be decided by the Assembly in accordance with the internal Regulations of the Organization.

Article XV Privileges and Immunities of the IBCA

1. The Organization shall enjoy such privileges and immunities for the active functioning of the Organization, as agreed in the Headquarters Agreement between the Organization and the Host Country.
2. The Organization may conclude agreements with concerned Parties other than the Host Country in order to secure appropriate privileges and immunities in the territories of those Parties.

Article XVI Intellectual Property Rights

1. The intellectual property rights in respect of any research and technological development, or products or services development:
 - a) carried out jointly by the Parties, or research results obtained through the joint activity effort of the Parties, shall be jointly owned by such



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

Parties in accordance with terms mutually agreed upon on a case to case basis; and

b) implemented solely and separately by a Party, or the research results obtained through the sole and separate effort of an individual Party, shall be owned by the Party concerned.

2. Patent rights, copyright rights or any other similar rights to any discoveries or work resulting from IBCA assistance under this Agreement shall belong to IBCA unless otherwise agreed in any particular case. Parties shall also inform IBCA if such Party is working with some other Organization/ Country/non-member or if any form of assistance w.r.t. protection and conservation of major big cats is being received from any source other than IBCA.

3. The use of the name, logo and/or official emblem of the Organization on any publication, document and/or paper not related to the Organization is prohibited without the prior approval of the Assembly.

Article XVII Settlement of Disputes

Any difference or dispute arising out of the interpretation, implementation and/or application of provisions of this Agreement shall be settled amicably through mutual consultation and/or negotiation between the Parties concerned through diplomatic channels.

Article XVIII Entry into Force

1. This Agreement shall enter into force on the fifteenth (15th) day after the date of deposit of the fifth (5th) instrument of ratification, acceptance or approval including that of the Republic of India.



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

2. This Agreement shall be subject to ratification, acceptance or approval by the Signatory Countries.
3. For any Country that ratifies, accepts, approves or accedes to this Agreement after the date of its entry into force, the Agreement shall take effect on the fifteenth (15th) day after the date of deposit of its respective instrument.
4. Once the Agreement comes into force, the International Steering Committee of the IBCA ceases to exist and a Standing Committee will be constituted.

Article XIX Amendment

1. Any Party may propose amendments to this Agreement by notifying the Secretariat in writing after expiry of one year from the commencement of this Agreement. Proposed amendments shall be communicated by the Secretariat to all Parties at least sixty (60) days prior to their deliberation by the Assembly. Amendments to the Agreement shall be adopted in accordance with Article VII (7) of this Agreement.
2. Amendments shall enter into force on the thirtieth (30th) day after the date of deposit of the fifth (5th) instrument of ratification, acceptance or approval of the amendments. For other Parties which ratify, accept, or approve the amendments after they have entered into force, the amendments shall come into effect on the thirtieth (30th) day after the date of deposit of their respective instrument.

Article XX Withdrawal



INTERNATIONAL BIG CAT ALLIANCE

A Party may, by written notification addressed to the Depository, withdraw from this Agreement which shall immediately communicate the notification to all Parties. The withdrawal shall take effect six (6) months after the date of receipt of the notification unless the notification specifies a later date.

Article XXI Depository

Instruments of ratification, acceptance or approval of, or accession to this Agreement shall be deposited with the Government of the Republic of India and any amendments or revisions thereto, which shall be promptly furnished with a certified copy thereof, to each Party to this Agreement.

IN WITNESS WHEREOF the undersigned, being duly authorized thereto by their respective governments, have signed this Framework Agreement.

DONE in Yerevan, on 30 of June 2025 in the English language.

Signature:

A handwritten signature in blue ink, which appears to be "Aram Meymaryan", is written over a horizontal line.

Name of Signatory: Aram Meymaryan

Designation: Deputy Minister of Environment of the Republic of Armenia

Country: Republic of Armenia



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



[Handwritten signature]
Նելլի Սարոյան